լուսամուտները, իսկ վեղարը շերտաւորուած է բոլորակ հիմքի վերայ, գմբէթը վերջանում է խաչով, որի ներքևի գունդն է միայն երևում, մնացածը լրացնում է երևակայութիւնը։ Մանրանկարի շրջանակը գծական արմաւենիկի ոլորապտոյտ է կարմիր զարդերով։

Սկզբնազարդը երկու շարք երեք երեք քառանկիւնիների մէջ եռատերևների և նրանց ցօղունների հիւսուածքի վարդեակներ են, ին վերից վար այնպիսի հիւսուածք, իսկ տառի քնորոշիչ կեռը վիշապագլխով վերջացած. ա եւ կ կապուած են իւ հետ պարանահիւսով։

Բազմաթիւ են մանրանկարչական տառերն ու լուսանցքի զարդերը. գոյների մէջ իշխողը կապոյտ լաճուարդն է, իսկ մօտիւներն են եռատերևներ, արմաւենիկներ, ութաձեւ զարդեր, կանթեր և օղակներ, պարանահիւս և այլ հիւսկէն մօտիւներ արևելեան բնոյթով։

Է.

Աւետարանի արտաքին և մանրանկարչական նկարագրութիւնն ու յիշատակարանները տալուց յետոյ՝ անցնինք այժմ բուն ուսումնասիրութեան։ Նախ տեսնենք նորա պատմութիւնը, որ ամփոփել կարող ենք մէջ բերուած յիշատակարանների հիման վրայ, նրանցից 1–11 համարներով նշանակուածներն անմիջական կապ ունին ձեռագրի ծագման հետ, իսկ մնացածները յետագայ պատմութեան։ Այդ յիշատակարաններից տեղեկանում ենք, որ աւետարանի ստացողն է Սահակ անունով կրօնաւոր քահանան, «աշակերտ սբ. ուխտիս Հաղբատայ, ազգաւ և տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնւոյ.»(*) Նորա ծնողներն են Ռոմանոս կամ Սիմանոս և Կատայ(**), իսկ հարազատ եղբայրներն են Իպատոս և Առաքել(***) որի նկարն ունինք Սահակ ըստացողի հետ (17ա և պատկ. 4). Նրանց քոյրերն են Զարհայ և Հոռոմտիկին(****). Թէ եղբայրները և թէ քոյրերը ամուսնացած են և զաւակներ ունին, բայց անունները չեն յիշուած։ Որպէս Սահակ ստացողի հոգևոր ծնող յիշւում է Սարգիս կրօնաւոր քահանան, որի եղբայրն է Շահեր(*). Սարգիսը հաւանօրէն Հաղբատի միաբաններից է, ուր հոգևորապէս ծնել և իւր կրթութիւնն է ստացել Սահակ կրօնաւորը։ Յիշւում են և Յակովբոս ու Վարդ իրենց ծնողների եւ ընտանիքի հետ(**), որոնք ստացողի հետ կարևոր կապեր ունին, բայց մանրամասնութիւններ չգիտենք։

Ստացողի գլխաւոր յիշատակարանից (1. Զ–ի մէջ 348ա.) իմանում ենք, որ աւետարանը նուիրուած է Արջոյ առճի սուրբ ուխտին, որ շինուած է հէնց նուիրատուի և նորա հարազատների ծախքով. «զբովանդակ գոյք ծնողաց մերոց եւ եղբարց ծախեցաք և շինեցաք զածաբնակ սբ. եկեղեցիքս»։ Տարաբաղդաբար անձամբ չենք տեսել այս վանքը, որ գտնւում է Անիից ոչ հեռու, Ալաճա լերան արևելա–հարաւային փէշերին, դէպի Տեկոր տանող ճանապարհից քիչ աջ, բայց Սարգսեանի բերած արձանագրութիւնների մէջ չկայ շինութեան թուականը և ոչ որևէ տեղեկութիւն շինողների մասին, միայն հնագոյն թուականը 1207–ից է, ասել է, թէ այդ ժամանակներն էլ կամ քիչ առաջ շինուած է վանքը։ «Եկեղեցիս այս թէպէտ և մեծութեամբն եւ հոյակապութեամբ զուգակշիռ չկայցէ ընդ Բագնայր, սակայն և ոչ շատ ստոր է քան զնա։ Նոյն օրինակ բաժանեալ է և սա ի ներքնագաւիթ և ի տաճար, անսիւն է ներքնագաւիթն և կամարաւ յարկեալ. և ի վերայ տաճարին եւ երկուստեք խորանին գեղեցկաշէն մատրունք կամ աւանդատունք հանդերձ կաթողիկէիւք իւրեանց(***), ուշադրութեան արժանի յատկապէս վերջին մասով, որպէս երկյարկանի եւ գմբէթով վերջաւորուած եկեղեցիների մի երևոյթ մեր ճարտարապետութեան մէջ, որի մասին քիչ յետոյ եւս խօսք կ'լինի։ Կարծում ենք, այս ուխտի առաջնորդն է հայր Եղբայրիկը, որի պատկերի նկարագրութիւնը տեսանք Դ. պրակում (պատ. 1.) որովհետև Հաղբատի առաջնորդն էր «տր. Յոհաննէս», իսկ Հոռոմսինը հայր Մխիթար, ուրեմն և Եղ-

(*) Յիշատ. 1. 2. 6. 7. 9. 10. 11. եւ 17ա. Զ–ի մէջ, պատկերի վերնագիրը։ (**) Յիշ. 1. 6. 8։ (***) Յիշ. 1. 2. 8։ (****) Յիշատ. 6։

(*) 1 և 3։ (**) 1 և 6։ (***) Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս. Վենետիկ 1864. 190։ Համ. և Ալիշան. Շիրակ. 121։